միկ պարտական լիցի հատուցանել պարտն նորայ որում ունի 'ի բանտ արկանողին։

ԳԼՈՒԽ ՃԿԷ.

Ամենայն հարկ մաքս և բաժին տարեկան բերմանէ երկրին հայոց թէ 'ի պտղոց, թէ 'ի բուսոց, թէ անասնոց, սողնոց և թռչնոց հանեալ լինի բաժին տանն հայոց յամսեանն սեպտեմբերի, կէսն բերմունք աշխարհին և կէսն ըստ արժողութեան տարւոյն, ոսկի և երծաթ և բերմունք աշխարհին բոլորն հատուցում լինի յամսեանն սեպտեմբերի առ 'ի շտեմարանս տէրունական 'ի նոյն աշխարհին, այլ ոսկի և երծաթն երից անգամ և երիս ժամանակաւ, մի՝ 'ի յամսեանն հոկտեմբերի, մի 'ի յամսեանն յունվարի վերջին հատուցումն 'ի յամսեանն մայիսի։

ԳԼՈՒԽ ՃԿԸ.

Բաժինն տանն հայոց 'ի բերմանէ աշխարհէն հայաստանեաց համարեսցի բանիւ համարոյն գաւառապետաց մի քննեսցի և մանրամասնաբար որոնեսցէ, եթէ ոչ ստասցէ քաղցրութեամբ ամենայն գաւառէ ըստ համեմատութեամբ համարին գաւառապետին իւրոյ։